ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

"22" հոկտեմբեր 2024 թվական N 1412-L

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ մասով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով և 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 698-L որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով և 20-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի (այսուհետ՝ Նախարար) տեղակալներին գործունեության համակարգման լիազորություններ վերապահել՝ համաձայն Հավելված 1-ի:

2. Հաստատել Նախարարի տեղակալների կողմից համակարգման իրավասությունը՝ ըստ Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, պետական ոչ առևտրային կազմակերպության և Նախարարության կառավարմանը հանձնված պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների՝ համաձայն Հավելված 2-ի:

3. Նախարարության գլխավոր քարտուղարին վերապահել՝

1) Նախարարության լիազորությունների իրականացման կազմակերպման, անձնակազմի կառավարման, ֆինանսատնտեսական գործառույթների իրականացման, քաղաքացիաիրավական հարաբերությունների մասնակցությանն առնչվող գործառույթների համակարգումը,

2)Նախարարության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության համակարգումը,

3)Նախարարության կառավարման համակարգի, այդ թվում՝ պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպության, նախահաշիվների և հաստիքացուցակների հաստատման ներկայացման, տարեկան հաշվետվությունների ընդունման, ուսումնասիրության և համեմատական ցուցանիշների վերլուծության գործառույթների համակարգումը, բացառությամբ այն կազմակերպությունների որոնց նախահաշիվների և հաստիքացուցակների հաստատման իրավասությունը վերապահված չէ Նախարարին:

4. Սահմանել, որ Նախարարի տեղակալներին փոխարինում է Նախարարի առաջին տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում, այդ թվում՝ Նախարարի առաջին տեղակալին, փոխարինում է տեղակալներից մեկը՝ Նախարարի հանձնարարությամբ:

5. Ընդունել ի գիտություն, որ Նախարարության Ներքին աուդիտի, Ռազմարդյունաբերական կոմիտեի համակարգումն իրականացվում է Նախարարի կողմից:

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

7/22/2024

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1

Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի

2024 թվականի հուլիսի 22-ի N 1412-Լ հրամանի

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման բնագավառներում Նախարարի տեղակալների կողմից համապատասխան աշխատանքների համակարգման և ապահովման, ինչպես նաև նրանց միջև աշխատանքի բաշխումն իրականացնելու նպատակով՝ սահմանել, որ

1) **Նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանը** Նախարարության աշխատանքները համակարգում է Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառներում՝

ա. կիբեռանվտանգության, էլեկտրոնային ծառայությունների և էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման և զարգացման, թվայնացման գործընթացների համակարգման, միասնական թվայնացված միջավայրի և թվային տնտեսության ձևավորման խթանման ոլորտի համակարգման և դրանց իրականացման ապահովման՝ թվայնացման վարչության միջոցով,

բ. միջպետական հարաբերություններում Հայաստանի Հանրապետության միջազգային համագործակցության իրականացման աշխատանքներին մասնակցության ապահովման, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» օրենքով Նախարարության լիազորությունների շրջանակներում միջազգային պայմանագրերի հետ կապված լիազորությունների իրականացման ապահովման՝ միջազգային համագործակցության վարչության միջոցով,

գ. գիտատեխնիկական ծրագրերի մշակման, իրագործման, տիեզերական գործունեության ոլորտում (այդ թվում՝ տիեզերական գործունեության լիցենզավորման) քաղաքականության մշակման և իրականացման ապահովման՝ Գիտատեխնիկական վարչության միջոցով, «Գեոկոսմոս» ՓԲԸ-ի և «Գալակտիկա» ՓԲԸ-ի աջակցությամբ,

2) **Նախարարի տեղակալ Ռուբեն Սիմոնյանը** Նախարարության աշխատանքները համակարգում է Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառներում՝

ա. բարձր և ինովացիոն տեխնոլոգիաների, տեղեկատվական տեխնոլոգիաների, ինչպես նաև նորարարության ձևավորման խթանման, նորարական գաղափարների գեներացման, ստարտափերի ձևավորման և զարգացման էկոհամակարգի ստեղծման ծրագրերի մշակման և վերջինիս իրականացման, տեխնոլոգիական ընկերությունների գործունեությանն աջակցության մշակման և իրականացման՝ Բարձր տեխնոլոգիաների վարչության միջոցով, իսկ Նախարարության կողմից իրականացվող ծրագրերի կառավարումը Ծրագրերի վարչության միջոցով,

բ. տեխնոլոգիական գործունեության արդյունքի առևտրայնացման քաղաքականության մշակման և իրականացման՝ Շուկայի զարգացման վարչության միջոցով,

3) **Նախարարի տեղակալ Գևորգ Մելիքսեթյանը** Նախարարության աշխատանքները համակարգում է Նախարարությանը վերապահված քաղաքականության իրականացման իրեն հանձնարարված հետևյալ բնագավառում՝

ա. փոստի, այդ թվում՝ լիցենզավորման և թույլտվությունների տրամադրման, Հեռահաղորդակցության միջազգային միությունում և Համաշխարհային փոստային միությունում, ոլորտային այլ միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններում Հայաստանի Հանրապետության շահերի պաշտպանության, ինչպես նաև տեղեկատվական և փոստային կապի ցանցերի գործունեության ապահովման՝ Կապի և փոստի վարչության միջոցով և «Հայփոստ» ՓԲԸ աջակցությամբ.

բ. կապի, ռազմական դրության դեպքում էլեկտրոնային հաղորդակցության բոլոր ցանցերի կամ ծառայությունների կամ դրանցից յուրաքանչյուրի շահագործման և կառավարման, ռադիոհաճախականությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների արդյունավետ օգտագործման և կառավարման, համացանցի (ինտերնետի), ոլորտներում քաղաքականության մշակման և իրականացման՝ կապի և փոստի վարչության միջոցով, ինչպես նաև «Հայաստանի հեռահաղորդակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի, «Հայաստանի հեռուստատեսային ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի աջակցությամբ:

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական
արդյունաբերության նախարարի

2024 թվականի հուլիսի 22-ի N 1412-Լ հրամանի

ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆ՝ ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Հաստատել Նախարարի տեղակալների կողմից համակարգման իրավասությունը՝ ըստ Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, պետական ոչ առևտրային կազմակերպության և Նախարարության կառավարմանը հանձնված պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների.

1) Գևորգ Մանթաշյան

Թվայնացման վարչություն

Միջազգային համագործակցության վարչություն (ոլորտային մասով)

Գիտատեխնիկական վարչություն

«Գեոկոսմոս» ՓԲԸ

«Գալակտիկա» ՓԲԸ

2) Ռուբեն Սիմոնյան

Բարձր տեխնոլոգիաների վարչություն

Ծրագրերի վարչություն

Շուկայի զարգացման վարչություն

3) Գևորգ Մելիքսեթյան

Կապի և փոստի վարչություն

«Հեռահաղորդակցության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ,

Հայաստանի հեռուստատեսային ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ

«Հատուկ կապ» ՓԲԸ

«Երևանի մաթեմատիկական մեքենաների գործարան» ՓԲԸ

«Լազերային տեխնիկա» ՓԲԸ

«Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ հատուկ կոնստրուկտորական բյուրո» ՓԲԸ

«Հայփոստ» ՓԲԸ